



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Աղավնաձոր, aghavnadzor@rambler.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2015թվականի N 19

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Աղավնաձոր համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 07-ի N 5 հերթական նիստի օրակարգը.

- 1) Աղավնաձոր համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին,
- 2) Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին,
- 3) Աղավնաձոր համայնքի ղեկավարի 2015 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի հաղորդման մասին,
- 4) Աղավնաձոր համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի N 39-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,
- 5) Աղավնաձոր համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի N 36 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,
- 6) Աղավնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԲԱՐՔՈՅԱՆ ԱՐՄԵՆ

2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

4. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ ՀԱՅԳ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Աղավնաձոր, aghavnadzor@rambler.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2015թվականի N 20-Ն

ԱՂԱՎՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Ընդունել Աղավնաձոր համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2008 թվականի նոյեմբերի 28-ի «Աղավնաձոր համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1/1-Ն որոշումը:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԲԱՐՈՅՑԱՆ ԱՐՄԵՆ

2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԿԱԶԱՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՅԿ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Համայնքի ղեկավար



ՄԻՒԹԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Աղավնաձոր, aghavnadzor@rambler.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2015 թվականի N 21

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԲԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ
հոդվածի երկրորդ մասով՝

Համայնքի ավագանին *որոշում է*.

1. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի քանակական կազմում
ընդգրկել ավագանու երեք անդամի:
2. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմում
ընդգրկել հետևյալ ավագանու անդամներին՝
 - 1) Հայկ Մնացականյան
 - 2) Արմեն Բարխոյանյան
 - 3) Վարդան Սարգսյան
3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 26-ի «Համայնքային
ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների
քանակական և անհատական կազմի մասին» N 21 որոշումը:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ

2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՅԿ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ



Համայնքի ղեկավար՝

ՄԽԻԹԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Աղավնաձոր, aghavnadzor@rambler.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2015 թվականի N 22

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ
ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
69-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել ի գիտություն Աղավնաձոր համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համայնքի 2015
թվականի երրորդ եռամսյակի բյուջեի կատարման մասին, համաձայն հավելվածի:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ

2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

4. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ ՀԱՅԿ

5. ՄԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ



Համայնքի ղեկավար՝

ՄԱՆԻԹԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ



ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՐԱՆՔԱԾՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

07.10.2015թ. N 22 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(02.01.2015թ. - 30.09.2015թ. ժամանակահատվածի համար)

1. Համայնքի անվանումը ՀՀ Կոտայքի մարզ Աղավնաձոր համայնք
2. Փոստային հասցեն Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր
3. Համայնքի տեղաբաշխման մարզը և համայնքի կոդը
ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման 207010
4. Համայնքին սպասարկող Գանձապետական ստորաբաժանման անվանումը ՏԳԲ
5. Համայնքի Գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը _____
6. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ (համայնքի բյուջե՝ 2)
7. Չափի միավորը՝ *հազար դրամ*

« 07 » « հոկտեմբերի » 2015թ.

Կ.Տ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. Յ. ԴԱՆԻԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Աղավնաձոր, aghavnadzor@rambler.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2015թվականի N 23-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով,
համայնքի ավագանին որոշում է՝

Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի <<Համայնքի 2015
թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 39-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

Եկամտային մասում .

1352 տողի 4-րդ սյունակի Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների
օրինանականացման համար վճարներ «0»թիվը փոխարինել «258,0» թվով:

Ծախսային մասում.

- 1) 2111 տողի 1.1.1 ծրագրի (օրենսդիր և գործադիր մարմիններ) 4111 հոդվածի (աշխատավարձեր և
հավելավճարներ) 6-րդ սյունակի «14724.0» թիվը փոխարինել «15844.0» թվով,
- 2) 2111 տողի 1.1.1 ծրագրի (օրենսդիր և գործադիր մարմիններ) 4213 հոդվածի (կոմունալ ծառայություններ) 6-րդ
սյունակի «100,0» թիվը փոխարինել «0» թվով,
- 3) 2111 տողի 1.1.1 ծրագրի (օրենսդիր և գործադիր մարմիններ) 4214 հոդվածի (կապի ծառայություններ) 6-րդ
սյունակի «500,0» թիվը փոխարինել «260,0» թվով,
- 4) 2111 տողի 1.1.1 ծրագրի (օրենսդիր և գործադիր մարմիններ) 4221 հոդվածի (ներքին գործուղումներ) 6-րդ
սյունակի «150,0» թիվը փոխարինել «50,0» թվով,
- 5) 2111 տողի 1.1.1 ծրագրի (օրենսդիր և գործադիր մարմիններ) 4232 հոդվածի (համակարգչային
ծառայություններ) 6-րդ սյունակի «50,0» թիվը փոխարինել «0» թվով,
- 6) 2111 տողի 1.1.1 ծրագրի (օրենսդիր և գործադիր մարմիններ) 4234 հոդվածի (տեղեկատվական
ծառայություններ) 6-րդ սյունակի «50,0» թիվը փոխարինել «0» թվով,
- 7) 2111 տողի 1.1.1 ծրագրի (օրենսդիր և գործադիր մարմիններ) 4241 հոդվածի (մասնագիտական
ծառայություններ) 6-րդ սյունակի «50,0» թիվը փոխարինել «25,0» թվով,
- 8) 2111 տողի 1.1.1 ծրագրի (օրենսդիր և գործադիր մարմիններ) 4251 հոդվածի (շենքերի և կառույցների ընթացիկ
նորոգում) 6-րդ սյունակի «100,0» թիվը փոխարինել «0» թվով,
- 9) 2111 տողի 1.1.1 ծրագրի (օրենսդիր և գործադիր մարմիններ) 4267 հոդվածի (կենցաղային և հանրային սննդի
նյութեր) 6-րդ սյունակի «160,0» թիվը փոխարինել «30,0» թվով,
- 10) 2111 տողի 1.1.1 ծրագրի (օրենսդիր և գործադիր մարմիններ) 4269 հոդվածի (հատուկ նպատակային
նյութեր) 6-րդ սյունակի «100,0» թիվը փոխարինել «0» թվով,
- 11) 2111 տողի 1.1.1 ծրագրի (օրենսդիր և գործադիր մարմիններ) 5113 հոդվածի (կապիտալ վերանորոգում) 6-րդ
սյունակի «257,3» թիվը փոխարինել «0» թվով,
- 12) 2133 տողի 1.3.3 ծրագրի (ընդհանուր բնույթի ծառայություններ) 4232 հոդվածի (համակարգչային
ծառայություններ) 6-րդ սյունակի «200,0» թիվը փոխարինել «150,0» թվով,
- 13) 2133 տողի 1.3.3 ծրագրի (ընդհանուր բնույթի ծառայություններ) 4234 հոդվածի (տեղեկատվական

ծառայություններ) 6-րդ սյունակի «50.0» թիվը փոխարինել «120.0» թվով,
 14) 2421 տողի 4.2.1 ծրագրի (գյուղատնտեսություն) 4235 հոդվածի (վարչական ծառայություններ) 6-րդ սյունակի
 «50.0» թիվը փոխարինել «40.0» թվով,
 15) 2511 տողի 5.1.1 ծրագրի (աղբահանություն) 4823 հոդվածի (պարտադիր վճարներ) 6-րդ սյունակի
 «100.0» թիվը փոխարինել «20.0» թվով,
 16) 2631 տողի 6.3.1 ծրագրի (ջրամատակարարում) 4823 հոդվածի (պարտադիր վճարներ) 6-րդ սյունակի
 «100.0» թիվը փոխարինել «10.0» թվով,
 17) 2631 տողի 6.3.1 ծրագրի (ջրամատակարարում) 5134 հոդվածի (նախագծահետազոտական ծախսեր) 8-րդ
 սյունակի «0» թիվը փոխարինել «550.0» թվով,
 18) 2641 տողի 6.4.1 ծրագրի (փողոցների լուսավորում) 6-րդ սյունակի 4269 հոդվածի (հատուկ նպատակային
 նյութեր) «100.0» թիվը փոխարինել «60.0» թվով,
 19) 2823 տողի 8.2.3 ծրագրի (մշակույթի տուն) 6-րդ սյունակի 4221 հոդվածի (ներքին գործուղումներ) «50.0»
 փոխարինել «5.0» թվով,
 20) 2823 տողի 8.2.3 ծրագրի (մշակույթի տուն) 6-րդ սյունակի 4267 հոդվածի (կենցաղային և հանրային սննդի
 նյութեր) «50.0» թիվը փոխարինել «0» թվով,
 21) 2823 տողի 8.2.3 ծրագրի (մշակույթի տուն) 6-րդ սյունակի 4269 հոդվածի (հատուկ նպատակային նյութեր)
 «150.0» թիվը փոխարինել «45.0» թվով,
 22) 2824 տողի 8.2.4 ծրագրի (այլ մշակութային կազմակերպություններ) 4241
 հոդվածի (մասնագիտական ծառայություններ) 6-րդ սյունակի «100.0» թիվը փոխարինել «55.0» թվով,
 23) 2824 տողի 8.2.4 ծրագրի (այլ մշակութային կազմակերպություններ) 4267 հոդվածի (կենցաղային և
 հանրային սննդի նյութեր) 6-րդ սյունակի «100.0» թիվը փոխարինել «0» թվով,
 24) 2824 տողի 8.2.4 ծրագրի (այլ մշակութային կազմակերպություններ) 4269 հոդվածի (հատուկ
 նպատակային նյութեր) 6-րդ սյունակի «30.0» թիվը փոխարինել «0» թվով,
 25) 2922 տողի 9.2.2 ծրագրի (միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն) 4269 հոդվածի (հատուկ նպատակային
 նյութեր) 6-րդ սյունակի «200.0» թիվը փոխարինել «140.0» թվով,
 26) 2922 տողի 9.2.2 ծրագրի (միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն) 4729 հոդվածի (այլ նպաստներ բյուջեից)
 6-րդ սյունակի «0» թիվը փոխարինել «60.0» թվով,
 27) 3112 տողի 11.1.2 ծրագրի (Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ) 6-րդ
 սյունակի «0» թիվը փոխարինել «608.0» թվով,
 28) 3112 տողի 11.1.2 ծրագրի (Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ) 6-րդ
 սյունակի «608.0» թիվը փոխարինել «315.3» թվով,
 29) 4772 տողի համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող
 հատկացումներ 4-րդ սյունակի «0» թիվը փոխարինել «292.7» թվով:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԲԱՐԵՆՑԱՆ ԱՐՄԵՆ

2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՅԳ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱԴԴԱՆ

Համայնքի ղեկավար՝



ՄԻԽԻԹԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Աղավնաձոր, aghavnadzor@rambler.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2015թվականի N 24

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 36

ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, հիմք ընդունելով «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածը, ««Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Աղավնաձոր համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի <<Կոտայքի մարզի Աղավնաձորի գյուղապետարանի 2015 թվականի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 36 որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ 2015 թվականի հուլիսի 1-ից սահմանված նվազագույնից ցածր աշխատավարձ ստացած աշխատակիցների համար կատարել վերահաշվարկ:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ

2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

4. ՄԱՅԱԿՅԱՆ ՀԱՅԳ

5. ՄԱՐԳԱՅԱՆ ԶԱՐԴԱՆ



ՄԽԻԹԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ



ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Աղավնաձորի գյուղապետարանի աշխատակազմի
Աշխատակիցների թվաքանակը՝ 14

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /դրամ/	Հավելումը	Հավելավճարը /դրամ/	Աշխատավարձի չափը /դրամ/
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Գյուղապետարանի աշխատակազմ	Համայնքի ղեկավար	Քաղաքական	-	1	350000	0	0	350000
2		Համայնքի ղեկավարի տեղակալ	Հայեցողական	-	1	150000	0	0	150000
3		Համայնքի ղեկավարի խորհրդական	Հայեցողական	-	1	120000	0	0	120000
4		Աշխատակազմի քարտուղար	Համայնքային ծառայության	1.2-1	1	150000	0	0	150000
5		Գլխավոր մասնագետ-հաշվապահ	Համայնքային ծառայության	2.3-1	1	149000	0	10000	159000
6		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-.2	1	100000	0	0	100000
7		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-.3	1	100000	0	0	100000
8		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-1	1	99000	0	0	99000
9		Տնտեսվար	Տեխնիկական սպասարկման	-	1	98000	0	0	98000
10		Փականագործ	Տեխնիկական սպասարկման	-	1	67000	0	0	75000
11		Պահակ	Տեխնիկական սպասարկման	-	1	67000	0	0	75000
12		Հավաքարար	Տեխնիկական սպասարկման	-	2	67000	0	0	150000
13		Վարորդ	Տեխնիկական սպասարկման	-	1	95000	0	0	95000
	Ընդամենը	13			14			10000	1721000



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Աղավնաձոր, aghavnadzor@rambler.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2015թվականի N 25

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ-ի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի պահանջները և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 15-ի N 89/3 դրական եզրակացությունը՝ համայնքի ավագանին որոշում է՝

1. Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողերից 0.00364 հա /կադաստրային ծածկագիր՝ 07-010-0947/ հողամասը փոխադրել Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողերի կատեգորիա, կապի հողերի գործառնական նշանակության՝ թվային հեռուստառադիոհեռարձակման ցանցի կառուցման և սպասարկման համար:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ

2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

4. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ ՀԱՅԿ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱԴԴԱՆ



Համայնքի ղեկավար՝

ՄԻԽԱԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Աղավնաձոր համայնքի ավագանու

2015 թվականի **հոկտեմբերի 7-ի** N 20 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՂԱՎՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2015 թվական

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և համայնքի բնակչության բարեկեցության, բարեկաման նպատակով սեփական պատասխանատվությամբ իրականացնում է ժողովրդի իշխանությունը, օրենքի շրջանակներում ապահովում համայնքային խնդիրների լուծումը և տնօրինում համայնքի սեփականությունը:

Համայնքի ավագանին կազմված է 5 անդամներից, գործում է ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, 1-ին փողոց 20 հասցեում:

1. Նպատակը

1. Սույն կանոնակարգն ընդունված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա:

2. Սույն կանոնակարգը նպատակաուղղված է **Աղավնաձոր** համայնքի ավագանու, ավագանու հանձնաժողովների և անդամների գործառույթների արդյունավետ կատարմանը, ինչպես նաև նրանց փոխգործակցությանը **գյուղապետարանի** **աշխատակազմի** (**այսուհետ՝ աշխատակազմ**) հետ տեղական ինքնակառավարման իրականացման գործում:

3. Սույն կանոնակարգը կարգավորում է ավագանու նիստերի անցկացման վայրը, կարգը, ինչպես նաև ավագանու որոշումների նախագծերի ներկայացման, քննարկման, ընդունման ու հրապարակման կարգը:

2. Համայնքի ավագանու գործունեության կազմակերպումը

1. Համայնքի ավագանին գործում է սույն կանոնակարգին համապատասխան՝ նիստերի, ինչպես նաև իր ստեղծած մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովների միջոցով:

2. Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Կարող են անցկացվել նաև արտահերթ նիստեր:

3. Համայնքի ղեկավարը համայնքի նստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում համայնքի ավագանու՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնակարգով նախատեսված կարգով գործունեությունն իրականացնելու համար:

4. Համայնքի ավագանու գործունեությունը հիմնվում է հարցերի ազատ քննարկման և կոլեկտիվ լուծման սկզբունքների վրա:

5. Համայնքի ավագանու աշխատանքային լեզուն հայերենն է:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԸ

3. Նորընտիր ավագանու առաջին նիստը

1. Առաջին նիստի բացման առթիվ ողջույնի ելույթով հանդես է գալիս համայնքի ղեկավարը կամ պաշտոնակատարը, որը և վարում է նիստը:

2. Նիստը վարողը ներկայացնում է ավագանու անդամներին՝ կարդալով յուրաքանչյուրի անուն ազգանունը, մասնագիտությունը և կուսակցական պատկանելիությունը:

3. Ավագանու անդամը, հանդիսավոր պայմաններում, նորընտիր ավագանու առաջին նիստի ժամանակ երդվում է. "Ես՝ _____, ստանձնելով ՀՀ Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնքի ավագանու անդամի լիազորությունները, երդվում եմ իմ ողջ գործունեության ընթացքում առաջնորդվել ՀՀ Սահմանադրությամբ ու օրենքով, անշեղորեն պահպանել ՀՀ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, գործել ի նպաստ համայնքի զարգացման ու բարօրության:

4. Երդումը տրվում է անհատական կարգով, տեքստի ընթերցմամբ:

5. Ավագանու անդամը ստորագրում է իր ընթերցած տեքստը:

4. Նիստի օրակարգի քննարկման կարգը

1. Համայնքի ավագանու նիստերի օրակարգի նախագիծը ձևավորում են համայնքի ղեկավարը և ավագանու անդամները՝ աշխատակազմի քարտուղարին նիստից առնվազն տասը օր առաջ ներկայացրած գրավոր հարցերից:

Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև համայնքում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան չորս տոկոսը:

2. Նիստի օրակարգի նախագիծը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը նիստն սկսվելուց առնվազն յոթ օր առաջ տրամադրվում են ավագանու անդամներին:

3. Ավագանու նիստը սկսվում է օրակարգի հաստատմամբ

4. Ավագանու նիստի ժամանակ օրակարգում ներառված հարցերի հերթականությունը կարող է փոխվել ավագանու որոշմամբ:

5. Օրակարգում ընդգրկված որոշման նախագծերը քննարկվում և քվեարկվում են առանձին-առանձին:

5. Համայնքի ավագանու նիստերի գումարման կարգը

1. Նիստը կարող է ընդհատվել ավագանու որոշմամբ, նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ՝ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի առաջարկով:

2. Ավագանու որոշմամբ, նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ, օրակարգում ընդգրկված հարցը կարող է տեղափոխվել հաջորդ նիստերի քննարկմանը:

6. Համայնքի ավագանու արտահերթ նիստը

1. Արտահերթ նիստ հրավիրելու մասին ավագանու անդամներին տեղյակ է պահվում աշխատակազմի միջոցով:

2. Ավագանու արտահերթ նիստը համարվում է ավարտված, եթե սպառվել են օրակարգի բոլոր հարցերը:

3. Արտահերթ նիստը կարող է ընդհատվել ավագանու որոշմամբ:

4. Արտահերթ և հերթական նիստերում քննարկվող հարցերի որոշման նախագծերի ընդունման համար անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվում են համանման պահանջներ:

7. Նիստերի իրավագործությունը

1. Ավագանու նիստը սկսվելուց առաջ աշխատակազմի քարտուղարը անց է կացնում նիստին ներկայացած և քվեարկություններին մասնակցած ավագանու անդամների գրանցում:

2. Գրանցումներն արվում են հատուկ մատյանում, որտեղ նշվում է նաև նիստից ավագանու անդամի բացակայելու պատճառը:

3. Համայնքի ավագանու նիստն իրավագործ է, եթե նիստին ներկա են ավագանու անդամների կեսից ավելին:

4. Նիստի իրավագործությունը վավերացվում է նաև նիստի ընդհատումներից կամ ընդմիջումներից հետո:

8. Դոմբաց և դոմփակ նիստերը

1. Համայնքի ավագանու նիստերը դոմբաց են: Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են աշխատակազմի աշխատակիցները:

2. Համայնքի ավագանին նիստին կարող է հրավիրել և լսել ցանկացած անձի:

3. Ավագանու որոշումներն ու ուղերձները կարող են հրապարակվել ռադիոյով, հեռուստատեսությամբ, մամուլում, հասարակական վայրերում կամ այլ ձևով՝ բնակչությանն այն մատչելի դարձնելու համար:

4. Առանձին դեպքերում դոնիակ նիստի առաջարկով կարող է հանդես գալ համայնքի ղեկավարը կամ ավագանու անդամը: Ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ կարող է անցկացվել դոնիակ նիստ:

5. Դոնիակ նիստում, բացի ավագանու անդամներից, նիստը վարողից և արձանագրողից իրավունք ունեն ներկա գտնվել միայն ավագանու որոշմամբ հրավիրված անձինք:

6. Դոնիակ նիստում ընդունված որոշումները հրատարակվում են:

9. Ավագանու նիստի վարման կարգը

Համայնքի ավագանու նիստը հրավիրում և վարում է համայնքի ղեկավարը կամ պաշտոնակատարը. նրանք ունեն խորհրդակցական ձայնի իրավունք:

Նիստը վարողը՝

ա) բացում, ընդհատում և փակում է նիստը,

բ) ձայն է տալիս ելույթ ունեցողներին,

գ) կազմակերպում է քվեարկության անցկացումը և դրանց արդյունքների հրապարակումը,

դ) կարող է ընդմիջել ելույթները՝ նիստի բնականոն ընթացքը վերականգնելու նպատակով:

10. Ավագանու նիստերի արձանագրումը

1. Համայնքի ավագանու նիստի արձանագրությունն իրականացնում է աշխատակազմի քարտուղարը:

2. Նիստերի արձանագրությունները պահպանվում են համայնքի նստավայրում:

3. Նիստերի ավարտից հետո՝ 3 օրվա ընթացքում, այդ նիստերի արձանագրությունները վավերացվում են նիստին ներկա ավագանու անդամների կողմից:

11. Բնակչության մասնակցությունը

1. Բնակչությունը իրավունք ունի մասնակցելու համայնքի ավագանու նիստերին: Համայնքի ղեկավարը պարտավոր է ապահովելու անհրաժեշտ աշխատանքային պայմաններ բնակչության, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և լրատվամիջոցների մասնակցության համար: Ցանկացած անհատ կամ խումբ, ով ցանկանում է դիմել ավագանու հերթական նիստի ժամանակ օրակարգային հարցերի վերաբերյալ, պետք է իր հարցադրումը գրավոր ներկայացնի աշխատակազմի քարտուղարին նախքան նիստի սկսելը: Սակայն, ավագանին ինքն է որոշում նիստի ժամանակ անհատին կամ խմբին լսելու հարցը:

2. Բնակչության հարցադրումները և առաջարկությունները օրակարգային ցանկացած հարցի վերաբերյալ թույլատրվում են ավագանու նիստին ներկա անդամների ձայների մեկ երրորդով: Ավագանու հերթական նիստերի վերջում հատկացվում է 30 րոպե ժամանակ՝ քաղաքացիների կողմից ավագանուն ուղղված ցանկացած հարցադրմանը, որը վերաբերում է համայնքին, պատասխանելու համար:

3. Հարցադրումների և առաջարկությունների հեղինակը ներկայանում է՝ նշելով իր անունն ու ազգանունը: Համայնքի ղեկավարը հերթականությամբ խոսք է տրամադրում ելույթ ունենալ ցանկացողներին:

4. Հարցադրումների և առաջարկությունների հիման վրա ավագանին նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ կարող է դիմել հանձնաժողովներին կամ աշխատակազմին լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու հարցի դիտարկման համար:

5. Բնակիչները, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչները պարտավոր են զբաղեցնել իրենց համար նախատեսված տեղերը և հետևել սույն կանոնակարգի 9-րդ կետով հաստատված ավագանու նիստի վարման կարգին:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ

ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Համայնքի ավագանու նիստում հարցերի քննարկման կարգը

1. Հարցերի քննարկումը սկսվում է նիստի օրակարգի հաստատումից հետո: Օրակարգային հարցի քննարկումը տեղի է ունենում հետևյալ հաջորդականությամբ՝

ա) հիմնական զեկուցողի ելույթը.

բ) հարցեր զեկուցողին.

գ) հարակից զեկուցողի ելույթը.

դ) հարցեր հարակից զեկուցողին

ե) մտքերի փոխանակություն.

զ) եզրափակիչ ելույթներ.

է) քվեարկություն:

2. Որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս տվյալ հարցի հեղինակը, իսկ համայնքի բնակիչների նախաձեռնությունը ավագանու նիստում ներկայացնում է նախաձեռնող բնակիչների ընտրած ներկայացուցիչը, իսկ որպես հարակից զեկուցող՝ հանձնաժողովի ներկայացուցիչը:

3. Եթե հարցի քննարկումը ընդմիջվել է, ապա ընդմիջման ժամկետը լրանալուց հետո քննարկումը վերսկսվում է այն փուլից, որից այն ընդմիջվել էր:

4. Հարցի քննարկման ընթացքում հատկացվում են՝

ա) զեկուցման համար՝ մինչև 20 րոպե

բ) հարցերի համար՝ մինչև 20 րոպե

գ) ելույթների համար՝ մինչև 10 - ական րոպե

դ) եզրափակիչ ելույթի համար մինչև 20 - ական րոպե

5. Քննարկվող հարցի վերաբերյալ զեկուցողի առաջարկությունը քվեարկության է դրվում առաջին հերթին: Զեկուցողի առաջարկությունը չընդունվելու դեպքում քվեարկվում են մտքերի փոխանակության ժամանակ արված մյուս առաջարկությունները: Այդ առաջարկությունների քվեարկման հաջորդականությունը որոշում է համայնքի ղեկավարը:

13. Հարցեր տալու կարգը

1. Հարցեր տալու համար ավագանու անդամների հերթագրումը իրականացնում է նիստը վարողը:

2. Հարցերը տրվում են ըստ հերթագրման հաջորդականության, նիստը վարողի հայտարարությամբ:

3. Եթե հարց տվողի և զեկուցողի միջև սկսվում է բանավեճ, ապա նիստը վարողը կարող է դադարեցնել հարցադրումը:

4. Մտքերի փոխանակության ընթացքում ելույթ ունեցողին հարցեր չեն տրվում:

14. Մտքերի փոխանակության կարգը

1. Մտքերի փոխանակության ժամանակ ավագանու յուրաքանչյուր անդամին ելույթ ունենալու հնարավորություն է տրվում:

2. Ավագանու անդամը կարող է նույն հարցի շուրջ երկրորդ անգամ ելույթ ունենալ միայն այն դեպքում, եթե ելույթով հանդես են եկել մյուս բոլոր ցանկություն ունեցողները:

3. Մտքերի փոխանակությանը, բացի ավագանու անդամներից և համայնքի ղեկավարից, այլ անձինք կարող են մասնակցել միայն ավագանու համաձայնությամբ:

4. Ավագանու անդամները ելույթ ունենալու ցանկությունը հայտնում են նստած տեղից ձեռք բարձրացնելու միջոցով կամ համայնքի ղեկավարին նախապես գրավոր իրազեկման միջոցով:

5. Ելույթ ունեցողները հանդես են գալիս նիստը վարողի հայտարարությամբ:

6. Համայնքի ղեկավարը դադարեցնում է համայնքի ավագանու ելույթը, եթե վերջինս գերազանցում է իրեն հատկացված ժամանակը նախագոյնացումից հետո:

15. Որոշումների ընդունումը

1. Քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե այլ բան նախատեսված չէ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով և սույն կանոնակարգով:

2. Ավագանու քվեարկությանը կարող են դրվել միայն սույն կանոնակարգով սահմանված կարգով ավագանու անդամներին բաժանված և քննարկված նախագծերը:

3. Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները, որոնց դիմաց նրանք ստորագրում են:

4. Համայնքի ավագանու որոշումը կնքում է համայնքի ղեկավարը:

16. Քվեարկության անցկացման կարգը

1. Նիստը վարողը քվեարկությունից առաջ կրկնում է քվեարկության դրվող առաջարկությունները, ճշտում է դրանց ձևակերպումները և հիշեցնում է նաև, թե ձայների ինչ քանակով է ընդունվում որոշումը:

2. Քվեարկությունը իրականացվում է նիստը վարողի հայտարարությամբ: Ձայները հաշվում է աշխատակազմի քարտուղարը:

3. Ավագանու անդամը քվեարկում է անձամբ՝ կողմ, դեմ, ձեռնպահ:

4. Քվեարկության ավարտից հետո նիստը վարողը հրապարակում է քվեարկության արդյունքները:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԸ

17. Համայնքի ավագանու անդամների իրավունքները

Համայնքի ավագանու անդամն իրավունք ունի՝

1. հարցեր ուղղել համայնքի ղեկավարին և ստանալ բանավոր կամ գրավոր պատասխան ավագանու հաջորդ հերթական նիստի ժամանակ, եթե ավագանին այլ որոշում չի ընդունում:

2. հնարավորության դեպքում մասնակցել ավագանու վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև փորձի փոխանակման այցերին:

18. Համայնքի ավագանու անդամի պարտականությունները

Համայնքի ավագանու անդամը պարտավոր է իր գործունեության ընթացքում առաջնորդվել օրենքով և համայնքի բարօրությանն ուղղված համոզմունքով:

Համայնքի ավագանու անդամը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

1. մասնակցել ավագանու այն հանձնաժողովների նիստերին, որոնց կազմում նա ընդգրկված է.

2. նախապես ծանոթանալ իրեն փոխանցվող քննարկման ենթակա նյութերին:

3. ծանոթանալ քաղաքացիներից ստացված դիմումներին և օրենքով սահմանված կարգով պատասխանել դրանց.

4. իրազեկ լինել տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրենսդրությանը.

5. հետևել համայնքի ավագանու և աշխատակազմի գործունեությանը վերաբերող նյութերի լուսաբանմանը տեղական զանգվածային լրատվամիջոցներում.

6. առաջնորդվել համայնքի ավագանու հաստատված կանոնակարգով

19. Համայնքի ավագանու նիստերից անհարգելի բացակայելու դեպքում ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կարգը

1. Ավագանու անդամների մասնակցությունը նիստերին ու քվեարկություններին հաշվառում է աշխատակազմի քարտուղարը:

2. Աշխատակազմի քարտուղարը եռամսյակը մեկ անգամ ավագանու անդամներին տեղեկանք է տալիս նախորդ նիստերից կամ քվեարկություններից իրենց բացակայության մասին:

3. Նիստերից ու քվեարկություններից իր բացակայության պատճառի մասին ավագանու անդամը տեղեկացնում է աշխատակազմի քարտուղարին: Աշխատակազմի քարտուղարը ավագանու նիստի ժամանակ հրապարակում է ավագանու անդամի բացակայության պատճառը, որը և արձանագրվում է:

4. Ավագանու անդամը նիստերից կամ քվեարկություններից իր բացակայության պատճառի մասին աշխատակազմի քարտուղարին, սույն կանոնակարգով սահմանված կարգով, չտեղեկացնելու դեպքում բացակայությունը համարվում է անհարգելի և արձանագրվում է համապատասխանաբար: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ աշխատակազմի քարտուղարին ներկայացվում է անաշխատունակության թերթիկ կամ տեղեկանք բժշկից:

5. Աշխատակազմի քարտուղարի կողմից տարվող հաշվառման հիման վրա, համայնքի ղեկավարը կամ ավագանու անդամը հերթական նիստի քննարկմանն է ներկայացնում ավագանու որոշման նախագիծը՝ մեկ տարվա ընթացքում նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից ավագանու անդամի բացակայելն անհարգելի համարելու մասին: Որոշման նախագիծին կցվում է նիստերից կամ քվեարկություններից ավագանու անդամի բացակայության արձանագրված պատճառները:

6. Ավագանու անդամն առնվազն 7 օր առաջ գրավոր տեղեկացվում է ավագանու նիստում իր բացակայությունների հարցի քննարկման մասին: Ավագանու անդամի բացակայության դեպքում, հարցի քննարկումը հետաձգվում է մինչև հաջորդ հերթական կամ արտահերթ նիստը, որտեղ այն քննարկվում է անկախ նրա ներկայությունից:

7. Յուրաքանչյուր ավագանու անդամի բացակայությունների վերաբերյալ որոշման նախագիծը քննարկվում է առանձին՝ սույն կանոնակարգի 3-րդ գլխի 12-րդ բաժնով սահմանված կարգով: Քննարկման ընթացքում ավագանու անդամը կարող է ելույթ ունենալ, պատասխանել հարցերին, հանդես գալ 20 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով:

8. Նիստերի կամ քվեարկությունների կեսից ավելին ավագանու անդամի բացակայելն անհարգելի համարելու մասին համայնքի ավագանու որոշումն ընդունվում է նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ:

20. Շահերի բախումը

1. Ավագանու անդամը չի կարող մասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների (ծնող, քույր, եղբայր, երեխա) շահերին:

2. Եթե առկա է վերը նշված հանգամանքներից որևէ մեկը, ապա համայնքի ավագանին տեղեկացվում է դրա մասին նախքան տվյալ հարցի քննարկման և քվեարկությանը սկսելը:

3. Եթե շահերի բախման առկայության դեպքում ի հայտ են գալիս վիճահարույց հանգամանքներ, ապա համայնքի ավագանին հետաձգում է որոշման կայացումը՝ լրացուցիչ պարզաբանումներ կատարելու նպատակով:

21. Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացի կոչում շնորհելու(զրկելու) կարգը

Համայնքի պատվավոր քաղաքացու կոչումը պատվավոր կոչում է, որը նախատեսված է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով:

Համայնքի պատվավոր քաղաքացու կոչումը շնորհվում է հետևյալ կարգով՝

1. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանը արժանանում են, անկախ ազգությունից, քաղաքացիությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, գույքային կամ այլ դրությունից, այն քաղաքացիները, որոնք իրենց երկարամյա անբասիր աշխատանքով կամ բացառիկ մեծ վաստակով նպաստել են համայնքի բարգավաճմանը, ակնառու ներդրում ունեն համայնքի տնտեսական, մշակութային զարգացման գործում, բացառիկ ավանդ ունեն մշակույթի, արվեստի, գրականության կամ գիտության զարգացման բնագավառում:

2. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու (զրկելու) առաջարկը ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի ղեկավարը: Համայնքի ղեկավարին նման առաջարկով կարող են դիմել ավագանու անդամները, հասարակական միավորումները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, մշակութային, գիտական, կրթական կազմակերպությունները:

3. Առաջարկ ներկայացնողը պարտավոր է հիմնավորել այն, համակողմանիորեն լուսաբանել համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանը ներկայացվող քաղաքացու կյանքը, գործունեությունը, ներկայացնել համապատասխան նյութեր և քաղաքացու լուսանկարը:

4. Ստացված առաջարկությունները քննարկում է համայնքի ավագանին, և նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ որոշում է կայացնում համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին:

5. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանն արժանացած անձանց տրվում է վկայական:

6. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու (զրկելու) մասին համայնքի ավագանու որոշումը հրապարակվում է, հնարավորության դեպքում լուսաբանվում է տեղական զանգվածային լրատվության միջոցներով:

5. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

22. Հանձնաժողովները և դրանց գործունեությունը

1. Համայնքի ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, իր որոշմամբ կարող է ստեղծել մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

2. Հանձնաժողովները ստեղծվում են որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ համայնքի ավագանու եզրակացություններ տալու նպատակով:

3. Հանձնաժողովների անդամների կազմը հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ:

23. Մշտական հանձնաժողովները և նրանց գործունեությունը

1. Մշտական հանձնաժողովները կարող են լինել՝

ա) գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողով.

բ) սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողով.

գ) իրավական հարցերի մշտական հանձնաժողով.

դ) ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով.

ե) ենթակառուցվածքներին առնչվող հարցերի մշտական հանձնաժողով.

2. Իրենց գործունեությունն իրականացնելու ընթացքում հանձնաժողովները կարող են աշխատանքի մեջ ներգրավել փորձագետների և խորհրդատուների, որոնք իրենց մատուցած ծառայությունների դիմաց կարող են վարձատրվել համայնքի բյուջեից:

24. Ժամանակավոր հանձնաժողովը և նրա գործունեությունը

1. Ժամանակավոր հանձնաժողովները ստեղծվում են առանձին որոշման նախագծերի նախնական քննարկման կամ որոշակի իրադարձությունների և փաստերի մասին ավագանուն եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար:

2. Ավագանին ժամանակավոր հանձնաժողով ստեղծելիս սահմանում է նրա խնդիրները, գործունեության ժամկետը և աշխատակարգը:

3. Իր գործունեության արդյունքների մասին ժամանակավոր հանձնաժողովը սահմանված ժամկետում զեկուցում է ավագանու նիստում:

25. Հանձնաժողովի աշխատանքների համակարգումը

1. Մշտական հանձնաժողովի աշխատանքները համակարգվում են իր կողմից ընդունված աշխատակարգի միջոցով: Հանձնաժողովի կազմից ընտրվում է հանձնաժողովի նախագահ, եթե աշխատակարգով այլ բան նախատեսված չէ:

2. Հանձնաժողովի նախագահի թեկնածությունը հաստատվում է հանձնաժողովի նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ:

3. Մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են, եթե դադարել են նրա որպես ավագանու անդամի լիազորությունները:

4. Հանձնաժողովի նախագահը՝

ա) նախապատրաստում և վարում է հանձնաժողովի նիստերը.

բ) գումարում է հանձնաժողովի արտահերթ նիստերը.

գ) հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը.

դ) ավագանու նիստին է ներկայացնում հանձնաժողովի եզրակացությունները և առաջարկությունները ուսումնասիրվող հարցի վերաբերյալ:

ե) ընթացք է տալիս և պատասխանում է հանձնաժողովին ուղղված դիմումներին:

5. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում են համաձայն հանձնաժողովի աշխատակարգի:

26. Հանձնաժողովների նիստերի հրավիրման կարգը

1. Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում համայնքի ավագանու նստավայրում: Այլ վայրում հանձնաժողովի նիստ կարող է անցկացվել հանձնաժողովի որոշմամբ:

2. Հանձնաժողովի արտահերթ նիստը գումարվում է ըստ անհրաժեշտության՝ նիստը նախաձեռնողի սահմանած ժամկետում, համաձայն հանձնաժողովի աշխատակարգի:

3. Ժամանակավոր հանձնաժողովի հերթական նիստերը գումարվում են հանձնաժողովի կողմից սահմանած ժամկետներում:

27. Հանձնաժողովների նիստերի անցկացման կարգը

1. Հանձնաժողովի նիստում կարող են ներկա գտնվել ավագանու անդամները, համայնքի ղեկավարը և հանձնաժողովի կողմից հրավիրված այլ անձինք:

2. Հանձնաժողովի որոշմամբ հրավիրված անձինք տեղեկացվում են քննարկումներից առնվազն երեք օր առաջ:

28. Հանձնաժողովի նիստում քննարկումների կազմակերպման և որոշումների ընդունման կարգը

1. Հանձնաժողովի նիստը սկսվում է օրակարգի հաստատումով: Մինչև օրակարգի հաստատումն այլ հարցեր չեն քննարկվում:

Նիստում հարցերը քննարկվում են հետևյալ հաջորդականությամբ՝

ա) հիմնական զեկուցողի ելույթը.

բ) հարցեր հիմնական զեկուցողին.

գ) հարակից զեկուցողի ելույթը (եթե այդպիսիք կան).

դ) հարցեր հարակից զեկուցողին.

ե) մտքերի փոխանակություն.

զ) հիմնական զեկուցողի եզրափակիչ ելույթը.

2. Հանձնաժողովի նիստում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է հարցի քննարման ավարտից հետո:

3. Նիստում քվեարկությունները կատարվում են միայն տվյալ հանձնաժողովի անդամների առաջարկությամբ:

4. Հանձնաժողովի անդամը կարող է հրաժարվել քվեարկությանը մասնակցելուց:

5. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

6. Նիստի արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

6. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՆ

30. Բյուջեի նախագծի քննարկման կարգը

1. Համայնքի բյուջեի նախագիծը համայնքի ավագանուն է ներկայացնում համայնքի ղեկավարը: Բյուջեի նախագիծը ներկայացնելուց հետո հանդես են գալիս՝

ա) համապատասխան հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը.

բ) ըստ ցանկության՝ մյուս հանձնաժողովների մեկական ներկայացուցիչները՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը:

2. Համայնքի ավագանու անդամները համայնքի ղեկավարին և մյուս զեկուցողներին հարցեր են տալիս սույն կանոնակարգի 3-րդ գլխի 12-րդ բաժնով սահմանված կարգով, որից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակություն սույն կանոնակարգով սահմանված կարգով:

31. Համայնքի բյուջեի կատարման հաշվետվության ներկայացման և քննարկման ժամկետները

1. Համայնքի ղեկավարը, եռամսյակը մեկ անգամ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն:

2. Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:

3. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ավագանու նիստում քննարկվում և հաստատվում է աուդիտորական մասնագիտացված եզրակացության առկայությամբ՝ մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը:

32. Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունը, բովանդակությունը և քննարկման կարգը

1. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ներառում է՝

ա) տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի հիմնավորվածության վերաբերյալ, դրանց համապատասխան վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի և հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների միջև.

բ) տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին համապատասխան հիմնավորումներով.

գ) տեղեկություններ հաշվետու տարում բյուջեի պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ.

դ) այլ տեղեկություններ, որոնք համայնքի ղեկավարն անհրաժեշտ է համարում համայնքի բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

2. Համայնքի ավագանու նիստում բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներկայացնում է համայնքի ղեկավարը: Զեկուցումներով կարող են հանդես գալ՝

ա) համապատասխան հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը.

բ) ըստ ցանկության՝ մյուս հանձնաժողովների մեկական ներկայացուցիչները՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը:

3. Համայնքի ավագանու անդամները համայնքի ղեկավարներին և մյուս զեկուցողներին հարցեր են տալիս սույն կարգի 3-րդ գլխի 12-րդ կետով սահմանված կարգով, որից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակություն՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:

4. Մտքերի փոխանակության ավարտից հետո քվեարկության է դրվում բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին ավագանու որոշման նախագիծը:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

33. Կանոնակարգի փոփոխությունները

1. Սույն կանոնակարգը կարող է փոփոխվել համայնքի ավագանու որոշմամբ: Ցանկացած կանոնակարգային փոփոխություն պետք է համահունչ լինի ՀՀ Սահմանադրությանը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին:

2. Փոփոխությունների ընդունումը պահանջում է ավագանու նիստին ներկա անդամների ձայների ավելի քան երկու երրորդը:

34. Կանոնակարգի ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ ֆինանսների նախար, 207010, Աղավնաձոր
Հաշվետվություն
Համայնքի բույսերի եկամուտների կատարման վերաբերյալ
(02/01/15 - 30/09/15թ. ժամանակահատվածի համար)

Տողի		Հոդվածի համար	Ընդամենը	Տարեկան հաստատված պլան		Ընդամենը		Տարեկան հշտված պլան		Փաստացի	
					այդ թվում			այդ թվում	Ընդամենը		այդ թվում
NN	Եկամտատեսակները		(ս.5+ս.6)	վարչական մաս	Ֆոնդային մաս	(ս.8+ս.9)	վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե	(ս.11+ս.12)	վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝ (տող 1100 + տող 1200+տող 1300) այդ թվում՝		28,471,300.00	28,471,300.00	0.00	28,471,300.00	28,471,300.00	0.00	20,269,214.00	20,269,214.00	0.00
1100	1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ՝ (տող 1110 + տող 1130 + տող 1150 + տող 1160) այդ թվում՝	7100	7,230,000.00	7,230,000.00	X	7,230,000.00	7,230,000.00	X	4,273,528.00	4,273,528.00	X
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112) այդ թվում՝	7131	3,200,000.00	3,200,000.00	X	3,200,000.00	3,200,000.00	X	1,615,932.00	1,615,932.00	X
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		0.00	0.00	X	0.00	0.00	X	882.00	882.00	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		3,200,000.00	3,200,000.00	X	3,200,000.00	3,200,000.00	X	1,615,050.00	1,615,050.00	X
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից այդ թվում՝	7136	3,700,000.00	3,700,000.00	X	3,700,000.00	3,700,000.00	X	2,464,596.00	2,464,596.00	X
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		3,700,000.00	3,700,000.00	X	3,700,000.00	3,700,000.00	X	2,464,596.00	2,464,596.00	X
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ այդ թվում՝	7145	330,000.00	330,000.00	X	330,000.00	330,000.00	X	193,000.00	193,000.00	X
